ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> հոկտեմբեր 2016թ
Ք. Եղեգնաձոր

N 57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով 2016 թվականի սեպտեմբերի 28-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրման 15-րդ ամյակը և Տեղեկատվության ազատության միջազգային օրը նշանավորելու նպատակով Երևանում տեղի ունեցած Ինֆորմացիայի ազատության կենտրոնի «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխության արդյունքները.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://vdzor.mtad.am/ տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք ճանաչվելու և Ոսկե բանալի մրցանակին արժանանալու համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սոնա Մարգարյանին խրախուսել պատվոգրով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ